ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

29 սեպտեմբերի 2023թ. N 66-Ա
ք. Երևան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 20-ի N 14-Ա որոշմամբ գրանցված նախաձեռնող խմբի կողմից 2023 թվականի օգոստոսի 31-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացրած ստորագրահավաքի ստորագրված ձևաթերթիկների ստուգման արդյունքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 20-ի N 14-Ա որոշմամբ գրանցված նախաձեռնող խմբի Ազգային ժողովին օրենքի նախագիծ ներկայացնելու համար «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով պահանջվող քանակի ստորագրությունների վավերականությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ